

Երկրորդ հաղորդում

**Չորս հանգուցային ճանապարհորդությունները
դարի սպասավորության մեջ մտնելու համար՝
սերտորեն հետևելով դարի սպասավորին՝
դարի տեսությամբ հանդերձ**

Գրվածքների լնիթերցում. Գ Թզ 18:21-40, 19:2-12, Դ Թզ 2:1-14

- I. Եղիան դարի սպասավոր էր՝ իր դարի տեսությամբ հանդերձ (հմմտ Մդք 4:5-6, Ղկս 1:13-17, 76-80, Մտք 17:1-13, Հյտ 11:3-12). յուրաքանչյուր դարաշրջանում Տերը հատուկ բաներ ունի, որ ուզում է իրագործել. Նա ունի Իր իսկ վերականգնումները և Իր իսկ կատարելիք աշխատանքները. այն առանձնահատուկ վերականգնումն ու աշխատանքը, որ Նա կատարում է մի դարաշրջանում, այդ դարաշրջանի սպասավորությունն է. Եղիայի սպասավորությունը նրա հակավկայություն լինելն էր և Խրայելի զավակներին ասելը, որ կուպաշտությունը Աստծուն վիրավորող մեղք է. Երբ ամբողջ Խրայելը կուտքերի էր պաշտում, Եղիան նրանց ասաց, որ նրանց երկրպագած կուտքերը կեղծ աստվածներ են, և միայն Եհովան է ճշմարիտ Աստված.
- Ա. Եղիայի անունը նշանակում է «Իմ Աստված Եհովան է». սա խոսում է նրա առաքելության և ազդաբարության մասին. նա գերությունից առաջ եղած մարզարեներից ամենաականավորն ու հատկանշականն էր, և նա հաղթող էր:
- Բ. Եղիայի օրոք ամբողջ Խրայելը երկրպագում էր Քահաղին, և միայն Եղիան էր ասում, որ Եհովան Աստված է. նա Աստծու կողմից բարձրացված մարզարեներից Խրայելի տխուր պատմության ամենախավար ժամերից մեկին, երբ նրանց ամայությունն ու խավարը առավել խիստ էին. Խրայելի ամբողջ բազավորությունը հետևում էր կուպաշտության նմուշին՝ Գ Թզ 18:19:
- Գ. Քահաղին նրանց երկրպագելն իրականում Սատանային նրանց երկրպագելն էր. Դ Թզ 1:2-ում ասվում է, որ Քահաղ-Ձերուբն ակլարոնցիների աստվածն էր. Նոր Կտակարանում Բենեղզերութը նշանակում է «Ճանճերի տեր», ինչը մատնանշում է Սատանային՝ որպես դևերի տիրոջը. իրեաներն այս անունը արհամարհանքով փոխել, «Բենեղզերուղ» էին դարձրել, որ «աղքակույտի տեր է նշանակում»՝ Մտք 10:25, 12:24, 27, Մրկ 3:22, Ղկս 11:15.
1. Որպես աղքակույտի տեր՝ Սատանան մասնազիտացած է այն բանում, որ ճանճերին առաջնորդում է աղքով սնվելու. քանի որ նա նաև ճանճերի տերն է, բոլոր մեղավորները նման են ճանճերի, որ հետևում են Սատանային՝ «կերակրվելու աղքով». Աղամի բոլոր ընկած հետնորդները Սատանայի գերիներն են, որը նրանց առաջնորդում է մեղքեր գործելու և նրանց դարձնում «մեղքի ստրուկ»՝ Հվի 8:34:
2. Մենք պետք է հետևենք Պողոս առաքյալի նմուշին, ով ասաց, որ այն

ԵՐՈՈՐԴ ԵՎ ԶՈՐՈՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

բաները, որոնք անցյալում մի ժամանակ իր համար ձեռքբերումներ էին, նա «աղը» (տականք, կեղտ, աղտ, շան լափ, թափոն) համարեց, որպեսզի Քրիստոսին ձեռք բերի՝ Փլա 3:5-8:

- Դ. Աքաաբը հարուցեց Եհովայի զայրույթն ավելի, քանի իրենից առաջ եղած բոլոր թագավորները. ուստի Աստված բարձրացրեց Եղիային՝ ազդարաբելու համար, որ Խրայելի զավակները նեղության էին մատնվել կոռապաշտության պատճառով, և որ միայն Եհովան է Աստված՝ Գ. Թգ 16:33, 18:4, 17-18, 37.
1. Որպես նորկտակարանյան հավատացյալներ՝ մենք պետք է անսանք Հովհաննես առաքյալի խոսքին. «Փոքր զավակներ, ձեզ պահեցե՛ք կուռքերից» (Ա Հվի 5:21). կուռքերը վերաբերում են ցանկացած բանի, որը փոխարինում կամ կեղծում է Քրիստոսին՝ որպես ճշմարիտ, իսկական ու իրական Աստծու (Հվի 20:28-29). մենք պետք է տեսնենք, որ մարդ Հիսուսն Աստված Ինքն է (1:1-2, 5:18, 10:33, Հոմ 9:5, Փլա 2:6, Ա Հվի 5:20):
2. Եհովան ասաց Եզեկիելին. «Մարդու որդի, այս մարդիկ հաստատել են իրենց կուռքերը իրենց սրտերի մեջ». սրտի մեջ եղող կուռքը մեր ներսում եղող ցանկացած բան է, որ մենք սիրում ենք ավելի, քան Տիրոջը, և որ մեր կյանքում փոխարինում է Տիրոջը՝ Եզկ 14:3:
3. «Հակաքրիստոս» բառի մեջ հունարեն «հակա» նշանակող նախածանցը երկու նշանակություն ունի. առաջին՝ այն նշանակում է «դեմ». երկրորդ՝ այն նշանակում է «տեղը», կամ «փոխարեն». հակաքրիստոս լինել, մի կողմից, նշանակում է Քրիստոսին դեմ լինել, իսկ մյուս կողմից՝ Քրիստոսի փոխարեն ինչ-որ բան ունենալ, մի բան, որը փոխարինում է Քրիստոսին՝ Ա Հվի 2:18-19:
4. Մենք պետք է Տիրոջը խնդրենք, որ մեզ փրկի մի ապրելակերպ ունենալուց, որը հակաքրիստոսի սկզբունքով է՝ Քրիստոսին փոխարինելու սկզբունքով, ով Օծյալն ու օծությունն է. հակաքրիստոսի սկզբունքով ապրելակերպ ունենալ նշանակում է ունենալ «հակաօծությունը» լինելու սկզբունքով ապրելակերպ, այսինքն՝ մեր ներսում Եռամեկ Աստծու շարժվելուն, գործելուն և հազեցնելուն հակառակ լինել՝ խի. 20, 27:
5. Սատանայի նպատակը մարդկանցից երկրպագությունը ստանալն է՝ բազմաթիվ կուռքերի ու կրոնների հետևում թաքնվելով (Մտք 4:8-9). կուռքերի հետևում թաքնվում են չար ոգիներն ու դեմքը, որովհետև Սատանան է դրանց հետևում. Հայրը երկրպագողների է փնտրում, որովհետև Սատանան փորձում է Աստծուց գողաճալ երկրպագությունը (Հվի 4:23-24, հմմտ Ա Հվի 2:20, 27):
- Ե. Եղիան ներկայացնում է հանուն Աստծու վկայությունը պահելու սեփական կյանքի համար շիոգալու սկզբունքը. նա ուժեղ ու քաջարի եր՝ կանգնելու թագավորի, ժողովրդի և Բահադի չորս հարյուր հիսուն մարդարեների առաջ. երբ եկեղեցին ամայացած է ու հավատացյալների

մեծամասնությունը՝ գաղց, Աստված բարձրացնում է հաղթողների, որպեսզի հակավկայություն լինեն, նրանց, որ չեն հոգում իրենց կյանքի համար, այլ հոգում են միայն Աստծու կամքի համար (օրինակ՝ «Անտիպար՝ Իմ վկան, Իմ հավատարիմը, ով սպանվեց ձեզ մոտ՝ այնտեղ, որտեղ Սատանան է բնակվում»)՝ Հյտ 2:13-14, 12:11:

II. Հկր 5:17 և 18-ում ասվում է. «Եղիան մի մարդ էր՝ մեզ նման զգացմունքներ ունեցող, ու նա ջերմեռանդորեն աղոթեց, որպեսզի անձրև չգա. և երեք տարի ու վեց ամիս երկրի վրա անձրև չեկավ: Եվ դարձյալ աղոթեց, ու երկինքն անձրև տվեց, և երկիրն իր պտուղն աճեցրեց».

- Ա. Այն, որ Եղիան «ջերմեռանդորեն» աղոթեց, տառացիորեն նշանակում է, որ նա «աղոթքում աղոթեց». սա ցույց է տալիս, որ Եղիային Տիրոջից աղոթք էր տրվել, որում նա աղոթեց:
- Բ. Նա չաղոթեց իր զգացմունքներում, մտքերում, մտադրություններում, տրամադրությունում կամ որևէ շարժափում, որի պատճառը հանգամանքները կամ իրավիճակներն են, իր սեփական նպատակին հասնելու համար. նա աղոթեց Տիրոջից իրեն տրված աղոթքում, որպեսզի Նրա կամքը կատարվի՝ հմտ Սղմ 27:4, Հվի 15:7:
- Գ. Կարմեղոս լեռան վրա Եղիան Իսրայելի ողջ ժողովովին և Բահադի չորս հարյուր հիսուն մարգարեներին ասաց. «Դուք մինչև ե՞րբ եք ոստոստելու երկու կարծիքի միջև: Երես Եհովան է Աստված, Նրան հետևեցեք, իսկ եթե Բահադն է աստված, գնացե՛ք նրա հետևից»՝ Գ Թգ 18:21.
 - 1. Եղիան աղոթեց «Եհովային՝ Աբրահամի, Իսահակի և Իսրայելի Աստծուն», և «Եհովայից կրակ իջավ և ողջակեզն ու փայտերը և քարերն ու հողն այրեց ու փոսի մեջ եղած ջուրն էլ կլանեց»՝ խիս. 36:38:
 - 2. «Եվ ամբողջ ժողովուրդը, երբ այս քանը տեսավ, երեսի վրա ընկավ և ասաց. «Եհովան, Նա՝ է Աստված: Եհովան, Նա՝ է Աստված»». դրանից հետո Բահադի բոլոր չորս հարյուր հիսուն մարգարեները մահապատժի ենթարկվեցին՝ խիս. 39:40:
 - 3. Երբ Հեղաքելը սրա մասին լսեց, սպառնաց սպանել Եղիային. քանի որ իր տկարության մեջ Եղիան վախեցավ, նա վախսավ՝ իր կյանքը փրկելու համար. նա քառասուն օր ու քառասուն գիշեր Զորեք գնաց՝ Աստծու լեռը, և մի քարայր մտավ ու այնտեղ գիշերեց՝ 19:2, 9-10:
 - Դ. Երբ Եղիան Աստծու լեռան վրա էր, Եհովան հանկարծ նրա կողքով անցավ, և Նա քամու մեջ չէր, երկրաշարժի մեջ չէր և կրակի մեջ չէր. կրակից հետո Աստված խոսեց Եղիայի հետ «մեղմ ու ցածր ձայնով». սա ցույց է տալիս, որ Աստված Եղիային մտցնում էր նորկտակարանյան դարաշրջան, որում Աստված Իր մարդկանց հետ խոսում է ոչ թե որոտով, այլ մեղմորեն ու ցածրաձայն՝ խիս. 11-12, Հոմ 8:6ը, Բ Կրթ 2:13, Ա Հվի 2:27:
 - Ե. Այնուհետև Աստված ասաց. «Ես Ինձ համար Իսրայելում թողել եմ յոք հազարի՝ բոլոր այն ծնկները, որ չեն խոնարհվել Բահադի առջև, և բոլոր շուրջերը, որ նրան չեն համբուրել» (Գ Թգ 19:18, Հոմ 11:2-5). այս

ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

հավատարիմ հաղողները Նրա «քաքցվածներն» են (Սղմ 83:3թ), իսկ մեր Աստված «Իրեն քաքցնող Աստված է» (Ես 45:15):

III. Այն, որ Եղիսեն հետևեց Եղիային Գաղգաղայից Բերել, Բերելից Երիքով և Երիքովից Հորդանան գետ, ցույց է տալիս, որ նորկտակարանյան դարաշրջանի սպասավորության մեջ մտնելու համար մենք պետք է խորքային կերպով հետևենք դարի սպասավորին՝ դարի տեսության համաձայն. սա անելու համար մենք պետք է հետևենք Տիրոջը չորս վճռական վայրերով՝ Դ. Թգ 2:1-14.

- Ա. Եղիան իինկտակարանյան դարաշրջանի նախատիպն է՝ իինկտակարանյան տնտեսությամբ հանդերձ, իսկ Եղիսեն նորկտակարանյան դարաշրջանի նախատիպն է՝ նորկտակարանյան տնտեսությամբ հանդերձ:
 - Բ. Դարաշրջանը փոխվեց Գաղգաղայով անցնելու շնորհիվ՝ այն վայրով, որտեղ Աստծու ժողովուրդը թլիքատվեց՝ վերջ դնելով իր մսեղիին. սա այն վայրն է, որտեղ մսեղին դատվում է, և այն վայրը, որտեղ Աստված մեզ լույս է տալիս մսեղին դատելու համար՝ Հս 5:2-9, Գդտ 5:24, Փլպ 3:3-8.
 1. Մսեղին այն ամենն է, ինչ ունենք մեր ծննդից ի վեր (Հվի 3:6). մսեղին ընկած եռամաս մարդու ծայրագույն արտահայտությունն է, իսկ մեր հոգում եղող Հոգին Եռամել Աստծու վերջնական իրականացումն է. ընկած մսեղին Աստծու ամենաուժեղ ու ամենաշար թշնամին է (Հոմ 7:5-8:13), և Աստված այն ատում է լիովին ու ամրողությամբ (Ծնդ 6:3, Ա Կրթ 2:14-16, 3:1, 3):
 2. Այն ամենը, ինչ ունենք մեր ծննդից ի վեր, ոչ միայն մեղքը, անմաքությունն ու ապականությունը, այլև բնական բարյացակամությունը, բարությունը, տաղանդը, նախանձախնդրությունը, իմաստությունն ու կարողությունը, հաճելի չէ Աստծուն:
 3. Մսեղին մերժելը հոգենոր կյանքի բարձրագույն արտահայտությունն է. բոլոր նրանք, ովքեր չեն սովորել մերժել մսեղին, չեն սկսել իրենց հոգենոր ուղին, և նրանք իրականում չեն ճանաչում հոգենոր կյանքը:
 - Գ. Դարաշրջանը փոխվեց Բերելն անցնելու շնորհիվ, որն աշխարհը քողնելու և բացարձակորեն դեպի Աստված շրջելու վայրն է՝ Աստծուն ընդունելով որպես ամեն ինչ. Բերելը վերաբերում է աշխարհի նկատմամբ հաղթանակին՝ Ծնդ 12:8, Ա Հվի 2:15.
 1. Ծնդ 12:8-ի համաձայն Բերելն այն վայրն է, որտեղ Աքրահամը զոհասեղան կառուցեց, Աստծու հետ հաղորդակցության ու շփման վայրը. դա այն վայրն է, որտեղ մենք նվիրաբերվում ենք Աստծուն ու լիովին տրվում ենք Նրան՝ աշխարհին հաղթելու համար՝ 13:3-4:
 2. Աշխարհի նկատմամբ հաղթանակը հափշտակվելու և Սուրբ Հոգու զորությունը ստանալու պայմանն է. եթե հավատացյալն իսկապես ցանկանում է լցվել Սուրբ Հոգով ու հափշտակվել, պետք է զին վճա-

ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

լի՝ աշխարհը բողնելու համար և սովորի հաղորդակցվել Աստծու հետ լիակատար նվիրաբերման զրհասեղանի վրա:

- Դ. Դարաշրջանը փոխվեց՝ Երիքովով անցնելով. դա առաջին քաղաքն էր, որ Հեսուն ու Խարայելի ժողովուրդը պետք է պարտության մատնեին, երբ մտան բարի երկիրը, և այն խորհրդապատկերում է Աստծու թշնամուն՝ Սատանային՝ Հս 6, Հյտ 12:11.
1. Հս 6-րդ գլուխում խոսվում է Երիքովին, որը նշանակում է «անիծված», հաղթելու մասին. քանանացիները խորհրդապատկերում են Եփս 6:12-ում հիշատակված երկնային ոլորտներում եղող չարի հոգևոր ուժերը:
 2. Սատանան աշխարհի կառավարիչն է (Հփ 14:30), իսկ չար ոգիները այս խավարի, որը վերաբերում է այսօրվա աշխարհին, աշխարհակալներն են. չար ոգիներն ապստամք հրեշտակներն են, որոնք հետևեցին Սատանային Աստծու դեմ նրա ապստամբության ժամանակ, և որոնք իմաս երկնային ոլորտներում իշխում են աշխարհի ազգերին, ինչպես, օրինակ, Պարսկաստանի և Հունաստանի իշխանները (Դճ 10:20):
 3. Մենք պետք է լինենք մարդիկ, որոնք հազնում են «Աստծու ողջ սպառագինությունը» (Եփս 6:11, 13). Աստծու ողջ սպառագինությունը Քրիստոսի ամբողջ Մարմնի համար է, ոչ թե Մարմնի որևէ առանձին անդամի. մենք հոգևոր պատերազմը պետք է Մարմնում մղենք, ոչ թե որպես անհատներ:
 4. Աշխարհին հաղթելու ճանապարհ հավատքի մեր հոգին վարժելն է, որպեսզի հավատանք Աստծու խոսքին, գործենք Նրա խոսքի համաձայն և հավատանք, որ ստանալու ենք Նրա խոսքը կատարելու արդյունքները (Բ Կրթ 4:13, Հփ 17:17, 6:63, Եփս 6:17-18). Երիքովն ընկավ այն բանի շնորհիվ, որ խարայելացիներն ապավինեցին Աստծու խոսքին և ամուր կանգնեցին իրենց դիրքում. երբ բանարկուն երեք անգամ գայթակղեց Տիրոջը, Տերը երեք անգամ արձագանքեց՝ ասելով՝ զրված է.... (Ստր 4:4, 7, 10):
 5. Չար ոգիների հարձակումը հաղթելու համար պետք է անտեսնք ամեն իրավիճակ ու զգացում և վարժենք հավատքի մեր հոգին, որպեսզի հավատանք Աստծու՝ խոստման խոսքին. մենք պետք է նաև կանգնենք այն դիրքում, որ Քրիստոսը տվել է մեզ, այսինքն՝ երկինքներում, և պետք է իջեցնենք Սատանային ու նրա չար ոգիները նրանց ստորադաս դիրքին՝ Բ Կրթ 4:13, Եփս 2:6, Կղո 3:1-2:
 6. Այն, որ քահանաները Երիքովում կրեցին Տապանակը, նշանակում է, որ հոգևոր պատերազմում առաջին բանը, որ պետք է անենք, Քրիստոսին մեծարելն է՝ Նրան ամեն ինչում տալով առաջին տեղը, առաջնությունը. փողերը փշելն ու աղաղակելը (յոթերորդ անգամ քաղաքի շուրջ պտտվելիս) խորհրդապատկերում են Քրիստոսի (Տա-

ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

պանակի) հետ միասին Աստծուն վկայելն ու հոչակելը Աստծո՝ հորդորի խոսքի հանդեպ հավատքի միջոցով՝ Հս 6:1-20:

- Ե. Դարաշրջանը փոխվեց Հորդանան գետով անցնելու շնորհիվ. այս գետը, որտեղ սկսվեց նորկտակարանյան մկրտությունը, խորհրդապատկերում է մահը. Հորդանան գետն անցնել նշանակում է մահին հաղթել՝ հարության մեջ ապրելու և սպասավորելու համար՝ Մտք 3:5-6, Հոմ 6:3-4, Գլու 2:20.
1. Տիրոջ մկրտությունը մահ է խորհրդապատկերում, իսկ զրից Նրա դուրս գալը՝ հարություն. հարության զորությամբ Տերը հաղթեց մահին. մկրտվելով՝ Նա կարողացավ ապրել ու սպասավորել հարության մեջ նույնիսկ նախքան Իր փաստացի մահին ու հարությունը երերուկես տարի անց՝ Մտք 3:13-17:
 2. Մեր վերածննդի ժամանակ մենք ձեռք ենք բերում Քրիստոսին՝ որպես այս հարության կյանքի. մարդ-Աստված՝ Հիսուսը, զամվեց խաշին ու սպանվեց անօրեն մարդկանց ձեռքով, բայց Աստված Նրան հարուցանեց՝ «մահվան ցավերն արձակելով, որովհետև հնարավոր չէր, որ Նա պահեր նրա կողմից»՝ Գրծ 2:23-24, Հվի 11:25, Ա Պտ 1:3:
 3. Կյանքի նորության մեջ քայլել նշանակում է մեր մկրտության իրականության մեջ ապրել (Հոմ 6:4). հոգու նորության մեջ ծառայել նշանակում է մեր մկրտության իրականության մեջ ծառայել (7:6):
 4. Մենք պետք է ձգտենք ճանաչելու Քրիստոսի հարության զորությունը. հենց Քրիստոսի հարության զորությամբ և ոչ թե մեր բնական կյանքով ենք վճռում վերցնել խաչը՝ ուրանալով մեր «ես»-ը և կարողանում ենք կերպարանակցվել Նրա մահվանը՝ Նրա խաչի հետ մեկ լինելով՝ Փլա 3:10-12, Մտք 16:24, Երգ 2:8-10, 14:
 5. Մինչ պատրաստվում ենք հափշտակվելու, պետք է սովորենք անցնել Հորդանանն ու հաղթել մահին. մենք պետք է սովորենք դիմակայել մահվան զորությանը, որը գոյություն ունի մեր մեջ և մեր միջավայրում, և մենք պետք է ի ցույց դնենք ու հայտնի անենք այն, որ միացած ենք մեր հարուցանված Տիրոջը՝ բոլոր բաներում ճանաչելով ու արտահայտելով Նրան՝ որպես հարության զորության՝ Ա Կրթ 6:17, Բ Կրթ 1:8-9, 5:4, 3:17, հմմտ 4:5, 10-12:
 6. Խաչի կյանքը մենք կարող ենք ապրել հարության զորությամբ՝ ոգևորվելով հարության հարստությամբ (Փլա 3:10). Երգ Երգոցի եզրափակիչ խոսքը Քրիստոսին սիրողի ու փնտրողի աղոքքն է առ այն, որ իր Սիրեցյալը շտապի ու վերադառնա Իր հարության զորությամբ (այժյամ և եղջերուի ձագ), որպեսզի հաստատի Իր քաղցր ու գեղեցիկ թագավորությունը (անուշահոտությունների լեռներ), որը կլցնի ամբողջ երկիրը (8:13-14, Հյու 11:15, Դնլ 2:35):
 7. Եթե ուզում ենք ստանալ Եղիայի հափշտակությունը և հոգու կրկնակի բաժինը՝ Սուրբ Հոգու զորությամբ հանդերձ (Դ Թօ 2:9-15), պետք է

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

անցնենք Գաղաղայով, Բերելով, Երիքովով ու Հորդանան գետով. որպեսզի մեր փորձառության մեջ դարաշրջանը Հին Կտակարանից փոխվի Նոր Կտակարանի, պետք է վերջ դնենք մեր մսեղիին (Գյու 5:24, Փլա 3:3), բողնենք աշխարհն ու դառնանք Աստծուն (Հկր 4:4, Ա Հվի 2:15-17), պարտության մատնենք Սատանային (Եփս 6:10-20, Հյու 12:11) և անցնենք մահվան միջով ու մտնենք հարության մեջ եղող ապրելակերպի մեջ (Հոմ 6:3-4, Գյու 2:20):

IV. Այս ներկա դարաշրջանը հաղթողների դարաշրջանն է, իսկ ներկա դարաշրջանի սպասավորների միջոցով իրականացվող այս ներկա դարաշրջանի սպասավորությունը Տիրոջ կողմից հաղթողներին ուղղված կոչը հնչեցնելն է (նրանց, որ տեսնում են հավիտենության տեսությունը, ապրում են հավիտենության կյանքով և կատարում են հավիտենության աշխատանքը, այսինքն՝ տեսնում են Աստծու վերջնական նպատակն ու իրենց կյանքով դրսերում ու առաջացնում են Նոր Երուսաղեմը). այս հաղթողները Քրիստոսի Մարմնի իրականությունը կառուցելու, Քրիստոսի հարսին պատրաստելու և Քրիստոսի բազավորությունը հայտնի անելու համար են. այս վերջին օրերին Աստծու վերջնական կարիքը բավարարելու համար մենք պետք է հաղթողներ՝ կենսական մարդիկ, լինելու որոշում կայացնենք՝ Գտվ 5:15-16, 31, Հյու 2:7, 11, 17, 26-29, 3:5-6, 12-13, 21-22: